ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

“ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ” ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 7854-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՐԿՎԱԾ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ PSMP2 - C-3.4.2/1

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից ՝ Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագրի (ՊՀԱԾ II) իրականացման նպատակով և մտադիր է այդ գումարի մի մասը ծախսել սույն հայտարարությունում նկարագրված խորհրդատվական և այլ ծառայությունների գնման համար:

Հայաստանի Հանրապետությունում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկմանն ուղղված քայլերը ներառում են շարունակական գործողություններ, որոնց վերջնական նպատակն է բարձրացնել հանրային կառավարման մարմինների բարեփոխումների հանդեպ հասարակության հետաքրքրությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել լուսաբանելու Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի ներկայացման էլեկտրոնային համակարգի և դրա հետ համադրելի կայքէջի, ինչպես նաև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ այդ գործիքներին առնչվող աշխատանքները, որոնք հանդիսանում են պետության կողմից իրականացվող բարեփոխումներին ուղղված ևս մեկ քայլ:

Ուստի Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Հանձնարարականն իրականացնելու համար անհատ խորհրդատուին կտրամադրվի մոտ 3 ամիս:

Որակավորում եւ պահանջներ

Հանձնարարականի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որը պետք է ունենա՝

- Հանրային իրազեկման խորհրդատվական և հանրային իրազեկման ծառայությունների տրամադրման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- Հանրային իրազեկման քարոզարշավների անցկացման, տեղեկատվության տարածման և նույնատիպ հանձնարարականների իրականացման փորձ,
- Պետական կառավարման մարմինների հետ համագործակցության փորձ:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎՋՄԲ փոխառությունների եւ ՄՋԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2004թ. մայիսին հրատարակված եւ վերանայված 2006թ. հոկտեմբերին եւ 2010թ. մայիսին ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2014 թ. դեկտեմբերի 10-ը, ժամը 18:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81, (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 54 57 08
Էլ-փոստ՝ info@ffpmc.am